ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 8

03 ՄԱՐՏԻ 2015թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին>> N 551 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն հայոց ցեղասպանության 100 ամյակի առիթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի կենտրոնական հրապարակում տեղադրելու Սողոմոն Թեհլերյանի արձանը:

2. Առաջարկել Մարալիկ համայնքի ղեկավարին սահմանված կարգով ապահովել արձանի հետ կապված հարցերը՝ սույն համաձայնությունը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի միջոցով ներկայացնելու համապատասխան պետական կառավարման հանրապետական մարմին, որը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին պետք է կատարի առաջարկություն՝ նշելով հուշարձանի տեսակը, տեղադրման վայրը, պատվիրատուին և ֆինանսական աղբյուրների մասին, որից հետո հուշարձանի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը կընդունի որոշում:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9-Ն

03 ՄԱՐՏԻ 2015թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի , 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 62-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 7597.9 թիվը փոխարինել 6871.9 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4112 (պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) հոդվածի 0 թիվը փոխարինել 726.0 թվով:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.